

mondo. (*Արեգ-ակն*) (*ի լուսաւորել գերկիր*) :
egli Oro giovanetto, che colla sferza
che tiene in mano, serba il regolare
movimento de' pianeti ; lungo il Nilo
era chiamato Serapide, il suo capo ra-
diente sosteneva un moggio, onde per
lui va ricca la Natura. I Persiani lo
salutarono Ormuzd, ossia *genio di luce*,
e Mitra con aspetto leonino, ossia Sole
invitto. I Greci lo chiamarono Ipe-
rione e Titano, e Dionisio conquista-

tore dell'India, ed Ercole vincitore.
Egli fu Belo a Galdei, Moloch a Ca-
nanei, Adad o Adone a' Fenicii, A-
tide ai Frigii..... A lui si consacrarono
le città di Eliopoli, in Egitto ; di Bal-
bek, in Siria ; Palmira e Babilonia an-
davano superbe di un tempio di Sole ;
fra i sette Pirei della Persia, uno ve
n'era a lui dedicato... a lui l'Egizie
piramidi, *և այլն* . Angelo-Sicca, (Mit :
Padova 1831) :

(Շարայարեկ)

Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ.

(Տես յէջ 212)



943. Լուֆ. Լուֆա. Լուֆահ.

ետին անուամբ կ'ընէ կամարկապցին. « Խոտի տակ է, որ զմարդն
» կու թմբեցնէ » : Բայց Լուֆ սովորաբար նշանակէ զնռնիկ, զոր
տես : — Լուֆա Ար. նշանակէ տեսակ մի ֆոլմորուաց, զոր Պէյթ.
կոչէ և երիցու մորուք, Աղան էլ-Քէշիւ : — Դարձեալ, նոյն լեզուէ
առած Լ. և Փ. Լսէա նշանակէ բազկաձեւ երկայն Դրումի (Թ. Գոլ
զապաղը) կերպ մի, որոյ մէջն բրդի պէս մարմին մի կ'ըլլայ. և
Ապունգի տեղ ի զործ ածուի : — Բժշկը. մի գրէ. « Էպոհ » որ է
վայրի Լուֆակն (կամ Լուպակն) : — Ար. Լեպահ *لحاح* նշանակէ Պերսէի ծա-
ռը, զոր տես ի կարգին :

950. Լոշտակ.

Տակին կամ արմատին կէս իրաւ կէս կարծեցեալ ձեւովն իբրեւ մարդու նման՝
կոչուած և Մարմնատակ, կամ Մարդատակ. որ և Մարդայտակ, Մարդախտ,
Մարդաժաղիկ, և ստուգապէս Մանրագոր. Լ. *Mandragora Bryonia Alba* կամ
Փ. *Mandragore*, Ար. Մարսա ըլ-Ղաշորուպ *بزرگه* *لحاح* Այս անուամբ ստորա-
գրէ Ամիրո. հայ և յոյն անուններէն զատ յիշելով « և Պ. Էպալուռի Սանահի
» կ'ասեն, և Եպալուռի ըլ-ֆայսիսաղ, (*دالوج* *عجوة*) այլ կու ասեն. և լաւն նոր լինի »
Իսկ այսոր հասարակաց ծանօթ և կիսածանօթ զարմանալեաց համար՝ լաւ կ'ըսէ,
Թէ « Դատ խօսք կայ ի հոս. և ասցել են, Թէ խոտս Սողոմոն իմաստնոյ ծառն
» է, Սիւլէյման աղաձի, և իր մատանուն ներքեւ էր այս ծառէս, այնոր ամե-
» նայն գաղանք և սողունք և (1), ի նորա հրամանն էր, և իխանութիւն կու

1. Օրինակաց մէջ պարզապէս թողուած է և կիսկաւոր զրուած է և գին :

» առնէր ամենայն զազանաց և անասնոց, Եւ այլ ասացել են, թէ Ալեկսանդր
» թագաւորն զթագաւորութիւնն այս ծառովս ունէր. և զայս փայտն ի հետն
» ունէր. և այս խոտովս շատ բան և թագաւորութիւն վարէր.. Եւ այս փայտիս
» կերպն այսպէս է, և այսոր տակին պատմութիւնն այսպէս է. և իր ամենայն
» զօգուածն ի մարդ կու նմանի, և ի յօտիցն ի վերայ կու կանգնի, և տերեւն
» ի գետնին վերայ կու պառկի. և տերեւն նման է իրպոռնուն (Շանխաղող)
» տերեւին, և կարմրուկ մրգեր ունի. և հոտն նման է մեղրի հոտին. և ի յգետս,
» տանն և ի լերունքն կու լինի: Եւ այս խոտիս հանելուս ատեն յայն ժամն է
» որ Մարեխն (Հրատ մոլորակն) ի Նոյն լինի և կամ ի յԱլթեզլիւրն լինի. և
» օրն երեքշաբթի լինի, և արեւն ի ցայթել ժամն լինի. յայն ժամ փորեն ըզ-
» չորեք դէշն, և հանց որ ինքն ի կախ մնայ. և մէկ քանի որ քաղցած մնացած
» շուն լինի բերեն և ի վիզն չուան կապեն, և զլուվին զմէկ ծայրն ի յայն
» խոտին տակն կապեն՝ որ փորել էիր, և ի հետեւ տեղ երթաս, և այն շանն
» ձայն տաս, և այն շունն քաշքշիւի, և զտակն ի տեղացն հանէ, և շունն սատ-
» կի (1) : Եւ այս խոտիս տակն մարդակերպ է ամենայն դիմօք . և առնուն ի
» սպիտակ նոր կտան փատթեն և պահեն » : Ստորագրելէն ետեւ կու սկսի
պատմել հրաշայի ներգործութիւններն բժշկական զօրութեամբ և ծիծաղական
հնարքներով. ինչպէս,

« Թէ ի ծաղկէն՝ որ դեռ չէ բացվել և պլպուլու է՝ առնուն և ի քթան կտաւ
» լաթն փաթտեն, և եօթնգուն ապրլով կամ դերձանով փաթտեն, և ըխտաւոր
» (լուսնոտ) տղին ի վիզն կապեն, քանի որ այս կապած լինի՝ ըխտաւորութիւնն
» անհոգ լինի և խախտի.. Եւ թէ ի տակէն ի կրակն ծխոս՝ դեռն և սատա-
» նայքն փախչին. Եւ խելքն ցրվածին և ձրի գրուցողին (զառանցող) թէ ծխես,
» օգտէ և փարատի.. Եւ Բժշկապետքն ասցել են, թէ այս խոտիս նշանն այս
» է. որ յորժամ գիշերն լինի այս փայտիս տերեւնին և կեղեւն՝ դէտ կրակ կու
» այրի և կու փայլէ, և թէ չորնայ՝ այլ չի փայլէ. և թէ թրին և ի լաթն
» փատթեն՝ այլի պսպղայ. Եւ այլ ասցել են Բժշկապետքն (ըսողն Պէյթար է)
» թէ, կտոր մի Երկարուն տակն առի՝ տան ի մէկ քունձն ձգեցի, և կէս գի-
» շերուն զարթեայ, և տեսայ որ տանն մէջն լուսով լցուեր էր, և զարմացայ
» յոյժ պայծառութեանն. ասացի, թէ այս ի՞նչ է զարմանայի, և տեսայ որ այս
» փայտս էր. և յորժամ չորացաւ՝ պայծառութիւնն գնաց.. Եւ Ղաֆիսդէն ասէ
» ցեղ մի կայ որ Սարաւ ըլ-Սոշայմանի տանն, և ինքն բուս-մն է որ ի քթանի
» արտին մէջն կու բուսնի. և ցեղ մի այլ ասէ, և իր ծաղկին նման է կարմիր
» վարդին, և տակն նման է Ընկըզի, և ինքս այլ ի գիշերն կու փայլի: Եւ այլ շատ
» խօսք.. Եւ գիտացիր, որ շատ հակառակ բաներ են ասցել ի վերայ այսոր, և
» չեն կարեն ստուգել թէ ինչ իրք է » :

Ուրիշ Բժշկարան մի կ'ըսէ. « Դեղ մի կայ Մարգաթաղի տանն. լինի բարձր
» և ծմակ տեղիք. և ծաղիկն իւր սպիտակ է կամ կարմիր վարդագոյն կամ կա-
» պուտ, բայց վարդագոյնն լաւ է, որ դերդ հոս փստի, մանաւանդ թէ զկար-
» մին գտնես. և նման է տակն նորա մարդոյ առն կամ կնոջ. երբ գտանես՝
» փորէ զտակովն շուրջ բոլորն, և հար աման մի, խնկէ հետ խնկով, և փորէ
» շուրջ զտակովն, և պատրաստ կաց որ չկտրի տակն. և երեք օր պարտ է զար-
» զարած աղիլիկ մի ի հետ տանել, որ առաւել պայծառանայ. և յետ երեք ա-
» ռուրն գնա դու և աղիլին, և շուն մի հետ ձեզ տարէք. կապէ զշունն տոռամբ

1. ինչուան իմաց ճիշդ այսպէս կ'ընեն, ըստ վկայութեան խաւաքի գետնոց, իրենց Ազ-
պրոսցի կողմած նախաւային դատուի դեղացիք. ուրիշ կողմ՝ փոխանակ չան՝ կապնի փայտ
մի կապեն լոյտակին և չուսնով քաշեն: Գրեթէ այսպէս խրատէ ընել և քաղմանուտն Պի-
նիոս (Իշ, ԺԳ), փրիստոսի Ա զարու հեղինակ, իրմէ նիներէ առաջ:

» զվիզն, և մէկալ տակն չուանին կապէ, ի ծաղկին տակն. և զնա դու զատե
» (հեռու,) կանչէ զլուսնն ի քեզ, և նա վազվազ գայ առ քեզ, և զտակն հա-
» նէ (1), և չուանն սատակի. յայնժամ դու առ զնա. յամենայն ուրեք պիտանի
» է... Հայք Լօղտակ, Պարոք՝ Դօստի թալիս, Արապք Գարեհար իջ-պարա...
» հեղինացիք զգորա անունն Ամառտանքոս ասեն »։ Զմե կարծեր որ հիմայ այս-
» պիտի անուն ըստի, բայց եթէ ստոյգ գրուած է՝ կրնար նշանակել տնմասն ծա-
» դիկ. ուրիշ օրինակ մի աւելի օտար կամ այլայլեալ գրէ Մգառնոտանքոս ? —
» Ուրիշ յոյն անուն մ'ընծայեն Քիւլկարանք կամ աղթարաբանք. « վասն Խոտին
» որ Լօղտակ ասեն ոմանք, յոյն Ապիհայեղի ? կոյէ, և յատկութիւնն է շորս
» կերպիւ. Նախ, թէ մարդ առնու զսորա տակն՝ և վերայ այն մարդոյն դնէ որ
» յիղն քաշվիլ է, նա օգտակար է », եւայլն. և երեսունէ աւելի օգուտներն
» յիշէ այլեւայլ ցաւոց, և կնքէ դիտքն. « Թագաւորն Ապրիանոս (կախարդաց
» Թագաւորն) զայս խոտս Թագաւոր է անուանել ամենայն խոտի, և շատ խափաթ
» ունի՝ ուտելով ըմպելով և հետ պահելով, շատ ողորմութիւն առնու յԱստուծոյ,
» և խոտիս (ի բան տանողին) միտքն բացվի, կարէ գիտել գերկնայինն և զեր-
» կրաւոր յատկութիւնն ? »։

Լաւ և ստուգագոյն գրէ ուրիշ մէկն. « Այս Լօղտակիս նշանն այս է. և է
» տերեւն որպէս Դիւում, (այսոր համար Թ. Կոչուի Եսպան գապաղը), և ինքն
» ի Շարմաշտղին (Բաղնիշան) ցեղէն է, ճգերն, թիւերն և տերեւն. և փաթու-
» թի սա ի թփերն և փշերն Երկու ազգ է, սպիտակ և Սեւ, և նման են մի-
» մեանց, զի մկրատն ունին և կու փատտուին. հերն զէտ Զմերկի լինի, պտուղն
» կարմիր և սեւ. իսկն կանաչ ի վերայ սեկացն ? Գործի, զէտ զէգէ պտուղն
» (այգոյ պտուղ) և ճուրնն : . . . Ի մայիս՝ զտակն և զծիլն քաղէ, և օգոստոս՝
» զպտուղն, երբ կարմրել և հասել լինի »։

Թողլով ուրիշ և ուրիշներուն ըսածները, նորագոյն հեղինակի մ'այլ գրածը
տեսնեմք, որ է Յակովբ Վ. Սիմոնեան կամ Ալուբեանց, անցեալ դարուն եր-
կրորդ կիսուն, որոյ գրած Հէյտէր Ալի խանի պատմութիւնը ծանօթացուցեր է
Ազգարար օրագիրն Մատրասի. գրած է սա և Երգերգոցի մեկնութիւն, յորում
ի յիշելն զՄանրագոր՝ կրտէ. « Լօղտակն ամենայն ուրեք գտանի, որ միշտ տե-
» սանեմք, և հանապաղ արմատ նորին ի գործ ածեմք ի դեղորայս, և զիւղն
» ոստոցն խարշեալ յաւուրս պահոց տղիւ համեմեալ ուտեմք, և յայլ աւուրս
» իւղով տապակեալ ախորժելի կերակուր առնեմք. զի է ախորժելի յոյժ և օգ-
» տաւէտ ազնիւ բանջար. որոյ պտուղն է հանգոյն Շնխաղողոյ՝ մանրիկ, Այլ
» այն է իսկապէս մարմնատակ, որոյ ականատես մեք եղաք, զի էր ստոյգ նման
» նորածին մանկան, ամենեւին անզանազան ի կերպարանաց մարդոյ, բոլոր ան-
» դամբն՝ անթերի և անպակաս, զլուխ հերգը և վարսիւք, եւայլն եւայլն. Որ
» լինի ի Բուռաստան, ուտի բերեն ի Կ. Պօլսի՝ ի պէտս բժշկաց. բայց զոտոն
» զեղէգն զճիւղն, զտերեւն և զպտուղն՝ ոչ եմ տեսեալ՝ զի զստոյգն գրիցեմ,
» այլ միայն զարմատն՝ զոր պատմեցիս Եւ տաճիկ բժշկաց հարցի, թէ դուք զի՞նչ
» կոչէք անուն սորա. — պատասխանեցին, թէ Ապրիանալ (Ապրուանէմ) ա-
» սեմք մեք։ Եւ ոմն ի մերայնոց հաւատարիմ բժշկաց պատմեաց մեզ, թէ հան-
» դիպելով իմ տոյն արմատոյ՝ ուտի հատեալ կտոր մի փոքրիկ ի շափ փոքր բա-
» կլայի առեալ բերանս սկսայ ծամել և կլանել. յայնժամ իսկոյն սկսայ լինել
» որպէս ցուցանըաւոր ոմն, զի կարմրացայ դիմագ յոյժ, մեծացաւ զլուխ իմ հնգապա-
» տիկ քան զառաջինն, որպէս թուէր ինձ, նմանապէս և բոլոր անձն իմ մե-
» ծացաւ, և եղէ որպէս արբեալ ի զինւոյ. և տեսողքն զիս՝ ծիծաղէին զինեւ,
» և տեսեաց աւելի քան ժամ մի. ապա և իմ անճարացեալ մատն արկի և փըս-
» խեալ դադարեցայ »։ — Վկային նաև բնախօսք այս բուսոյ լեղումեան և

1. Ուրիշ օրինակ. « Հասն զծաղիկն ի տակէն ».

Թմրեցուցիչ բնութեան. բայց կարեւոր է գիտնալ՝ որ կայ զանազանութիւն
 Լօշտակի և Մանրագորի մէջ. առաջնոյն սեփական է վերոյգրեալ լատին կոչումն
 Breyonia Alba ֆ. Brione, միւսոյն նմանաձայնն և յօտար լեզուս, Mandragora.
 զոր և մենք ի կարգին պէտք է յիշեմք այս և խնճողակ անուամբ, Թողլով այլ
 շատ խօսքն, որով Թերեւս մենք այլ մեղադրիմք, սակայն հարկ է Լօշտակի մար-
 դանմանութեան առակը պարզել՝ բռնայն արմատը կամ տակը պատկերելով, ուր
 միայն, մարմնոյ երկու բաժնուած մասին նմանութիւն կայ, իսկ միւս մասանց
 կամ անդամոց նմանութիւնքն՝ խարերայից արուեստով ձեւացած են, (և մեր
 Աւուրեանց վարդապետն այլ խարած). և այս ոչ միայն առ մերայինս կամ յա-
 րեւելս հիմայ, այլ և հին ատեններ և առ Եւրոպացիս — Լօշտակն (B. Alba)
 գտուի Կովկասի երկու կողմն այլ. — B. Dioica կոչուածն ի Բարերդ, ի Հր-
 ւովկաս. — B. Macrophylla ի Պոկլան՝ մօտ ի Տարօն:

955. Խաբըրուկ. Խաբուկ. Խարշուկ.

Առջին անունն յիշուած է յօրագրի, երկորդն ի Շէհրիմանէ, որ համարի Լ.
 Lapsana, ֆ. Lapsane. ուրիշ (անծանօթ) մ'այլ Խարուկ կոչած է, զոր զրէ և
 Պէյթար, لسان Լմիրտ. « Լապսան. ոմանք այս խօսիս Թ. Ղիմի կ'ասեն.
 » և ինքն վայրի Խարտաւն է. և թէ եփիս ջրով և մէջն նստի տղան՝ զէտ առ
 » ազան՝ շատ շուտ քայլէ, և թէ զհունտն ծածեն կաթով շաղեն և յերեսն ծածեն՝
 » զմանն տանի. և թէ շատ տարպանի (շատ անգամ) ծծես՝ զերեսն պայծառ
 » առնէ և յիստըկէ »: — Lap. Intermedia կոչուի տեսակ մի որ գտուի ի Կարին,
 Մուշ, Ծանախ. — L. Grandiflora (Մեծածաղիկ), ի Պոնտոս և Կովկաս:

(Շարայարեղի)



Փառնակ. — Լուսնի դիք. (տես յ'էջ 248).

